

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՔ.
(Հարսնակութիւն)։

Հանկէրը բուրթել իշխանի մայր Թամթա, Խաթունին է։ Սա Տարսայի հշխանի հարսն և նորա որդի Ելիկումի կինն է։ Ըրձանագրութիւնն անուանում է նորան աշխատաւէն և բարուակառ, բայց ափսոս որ մի քանի բառ եղծուած է։ Ահա նա Զաշխարհաշեն եհ ի պարոնն զթամթա խաթունն մայր Բուրթելին յիշեցէք։ Սա մեռել է 761—1312 թուականին։ Երբ մոնելու լինսնք Տարսայի հի սոյն ձեռակերտ դամբարանը, նորա դռան առաջ գուրսը, քարակյաների մէջ ընկած կը-տեսնէք մի գեղեցկաքանդակ, կէսը կոտրած խաչ քար այս տիկնոջ կաղ-մած իւր երկու զաւակների երկարակեցութեան համար, «Զայս նշանն Յիսուսի խաչել Տեառն Աստուծոյ վասն քրիստոսակը իշխանուչի Թամթա խաթուն ի բարեխաւ-սութիւն գլխ իւր մեծափառ իշխանին էլլիկումին և վասն յերկար կենաց զաւակաց իւրօց Բուրթելին և Բուզգային։

Վեցերորդ տապանաքարը անարձանագիր է։

Երկու քայլ յառաջ գնալով ես նոյն կարգով զննում եմ տապանաքա-րերի եւէրը շարքը։ Առաջնը Տարսայի հի որդի Փախրադուլայինն է, որի շափաքերական արձանագրութիւնն այսպէս է։

- « Այս յարկ տապանի
- « Բանդ բարիկութեան է
- « Եւ գուփի քերութեան
- « Հրաշագեղ մանկանն
- « Եւ քաջազաւր երիտասարդին,
- « Փախրադաւլին,
- « Որդւոյ մեծափառ իշխանին
- « Տարսայի ձինն,
- « Վասնորոյ աղաչեմ յիշել:
- « Բայն 21ս (745—1296)։

Սա Տարսայի հառաջին կնոջ, Արուզ խաթունի երրորդ՝ վերջին որդին է, որ ինչպէս իւր յիշատկարանի մէջ բացադրում է նորա եղբայր Ստե-փաննոս եպիսկոպոս Օքբելեանը, մեռել է ծաղիկ հասակում, չամուսնացած, առանց որ և է յիշատակի։

Քերում եմ այս տեղ Օքբելեանի իսկական խօսքերը « Աստանօր, Ով եղբարք յիշեմ և զնոցուած լերդի իմայ, զի սակաւ մի յառաջ քան

զգծագրութիւն տառիս հասաւ մեզ սուբ անվերանալի, զի կրտսեր և սիրելի եղբայրն իմ Փախրադուլայն ի զարդ և ի գեղ մանկական հասակի, մինչ տէգ մօրուացն փաղփեալ լիներ թխատիպ տեսակաւ շուրջ բոլըրեալ զպատշաճագեղ ծնօտիւքն և սիրո նորա զուարձ խնդամուական խորհրդօք ի վայելս քաղցրազբօս կենցաղցոյս և կամք նորա ի վազս և ի թիսս իշխանաշուք փառաց, յանկարծակի հասեալ օրհասն կենաց՝ խզեաց զըսյն քաջուղէշ և խլեաց զտունին ծաղկափթիթ, երարձ տարաժամ զբաղձալին ինձ*).

Եւէրբար տապանաքարը նոյն իսկ Տարսայիթ իշխանին է հետևեալ չափաբերական արձանագրութեամբ:

* Այս է հանգիստ արքայաշուք կողմնակալին.

Հզօր և մեծ գործակալին,

Քաջապահ մենամարտին:

* Աթարէկ Տարսայիթին:

Տարսայիթը վախճանուել է 739—1290 թուականին: Սակաւաթիւ Խոսքերով որոշել իւր ժամանակին այս նշանաւոր մարդու անձնաւորութիւնն անկարելի է: Ափսոս որ նորա տապանաքարը փուխր լինելով մի մասը արդէն ջարդուել է: Սորան առաւել նպաստում է այն հանգամանքը, որ բոլոր այդ տապանաքարերը տափակ լինելով և գետնին հաւասար յաճախակի ընկնում են այցելուների ոտաց տակ:

Եւըրբար Սմբատ իշխանին է, որի լակոնական արձանագրութիւնը ձայնում է «Սմբատ արքային է տապանս յիշեցէք, Թվիս 21թ (722—1273): Սա ևս առաւել նշանաւոր և բազմաշխատ անձնաւորութիւն է, որի մասին յետոյ»:

2-րդը՝ Տարսայիթի որդի Ելիկում իշխանի տապանաքարն է: «Ի թըմին 21թ. (749—1300) զգեղեցկատիպն էլիկում, որդի մեծի Տարսայիթին, որ առիւծօրէն խրոխտ մանչեր ընդ դէմ այլասեռ գնդին, աղաշեմ յիշել յաղօթսու: Իրու ապացոյց հանդուցեալ իշխանի խրոխտ մռնչելցն՝ տապանաքարի վերայ նկարած է առիւծի պատկեր քարի ամրողջ երկարութեամբ ցից ականջներով և մազոտ բաշով: Առիւծի գլուխը՝ հանգատացն առնելուայի վերայ՝ կրում է մի զարդարուն թագ: Ահարկու կենդանին պարկած է փոքր ինչ աջ կողքի վերայ աջ թաթը ծնօտի տակ: Իսկ ձախ թաթը պարզած ձախ աղդրի վերայ: Յետեկի ձախ ոտը դրած է աջ ոտի վերայ կանխապէս փաթթուած լինելով կենդանու երկայն պոչով: Այս տեղ հետաքրքիր է և այն իրողութիւնը, որ ժբ, ժգ դարերում

(*) Օրբել. Պատմ. գլ. ՀԱ.

և գոծ էր ածւում այժմեան մութաբարարձը ։ Անօյնպիսի մութաբայ զօլ չմից դրած է բաղկաթոռի մէջ ։ Մարիամ Աստվածածնի տակ Քուրթել իշխանի տաճարի գուան վերը ։

Արդեօք որպինի՞ քաջութիւններով էր նշանաւոր իշխան Ելիկումը պատմութիւնը չէ աւանդում ։ Միայն հասպատ է որ Եթե առիւթաբար քաջադործութիւններ չկատարէր տապանաբարի պատկերը և գրութիւնը չէին կարող քարոզ լինիլ Ելիկումը անձնաւորութեան մասին ։

Տարսայիծ իշխանի մահից յետոյ գերիշխանութիւն ձեռք բերելու համար վէճ է ծագում նորա ժառանգների մէջ ։ Արջինները իւրեանց գանգատը հասցնում են այն ժամանակի թամար իշխան Արդաւն ղանի իրաւասութեանը որ արդար է համարում կողմնակալ իշխան ճանաչել միայն սոյն Ելիկումին՝ իրբն Տարսայիծ իշխանի անդրանիկ որդւոյն ։ Բայց սա իրբն բարի բնաւորութեան մարդ չկամեցաւ միայնակ ժառանգել իւր հօր Երկիրը և յոժար կամօք մասն հանեց իւր Եղբայր Զալալին և հօր Եղբայր որդւոյն ։ Լիւարիտին ։

Երբ սորա Եղբայր Սաեփանսոս Եպիսկոպոս Օրբելիանը արևելեան բոլոր Եպիսկոպոսների կողմից մի հռչակաւոր պատաժան գրեց Գրիգոր կաթողիկոս Անաւարդեցու կարգադրութեանց գեմ ։ Ելիշեալ թուղթը այլ Եպիսկոպոսների միշխանների շարիքում սոտորագրեց և այս Ելիկումը ։

Վերջապէս սոյն կարգում կայ և մի տապանաբար բայց չունի ոչ գրութիւն և ոչ այլ յիշաւակարան ։ Միայն աներկրայելի է որ նորա տակ ամփոփուած է Օրբելիան տան անդամներից մէկը ։

Դամբարանի սեղանի վերայ Երեք որմնափակ սիւներից իւրաքանչիւրի վերայ նկարած է մի մի բերանաբաց լեղուն հանած օձ ։ Խոկ սոցա գէմ լուսամտի վերև պոչերով միմիանց փաթթուած երկու օձ լեղուները հանած կարծեն յարձակւում են առաջբնների վերայ ։ Վերջացնելով դամբարանի զնողթիւնը մենք դուրս գնանք նորա միջից և մօտենանք Սմբատ իշխանի կառուցած ժամատանը ։

Այս ժամատունը մի ընդարձակ քառանկինին կամարակապ շինութիւն է ։ կանգնած տուրք կալապեալ Եկեղեցյու արևմտեան պատին կից ։ Աս ամբացած է ութ որմնակից բոլըրիկ սիւների և այդ սիւների վերայ յենուած կամարների վերայ ։ Որոնք միանալով առաստաղում իւրար հետ կազմում են Երդիկում մի լուսամուտ ։ Աւսի Երկու դուռն մինն արևմտեան որից այժմ կատարում է դուրս ու ներսը ։ Միւպը հարաւային ծածկուած քարակոյաններով Պատերի Երեք լուսամուտների իւրաքանչիւրը քարակ միշասիւնով բաժանուած է Երկուսի ։

Հիւսիսային կամարի տակ քանդակած է կարծեօք Սմբատ իշխանի պատկերը ։ Նա իւր արագաշարժ ձիու վերայ նստած Եռանկիւնի սալաւարդը

գլխին՝ կեզ սուրբ իջեցնում է կատաղի վագրի գլխին որ յետևի ոտքերի վերայ ծառակ կանդնել նորա առաջ Զանազան հետաքրքիր այցելուներ չեն զլացել ածուխով կամ կաւիճով գրոշմել իւրեանց անունները ուստի բարեկն ժամատան պատերի վերայ ներսաւ նորա են Խվան Բարաեւ Պ. Քոռնվուցի Արտէմ Սարուխանի գով Պաւել Կամբարով Ա. Ամիր Խանով և այլն ։

Ժամատան արևմտեան դրան վերի լուսամաի վերը և վայրը կան քանդակործ պատկերներ Արինը ներկայացնում է հայր Աստուած ձախ ձեռքում մի գանգ որի վերայ հոգին ուուրբ աղաւնակերպ իջում է ։ Խսկ բարձրացրած աջ ձեռքով խաչակինքում է ։ Նորա ձախ կողմաւմ քերովքն է ։ Խսկ աջ կողմում Քրիստոսի խաչելութիւնն Աստուածածնի և Մարիամ մագթաղինացու հետ ։

Լուսամորի ոտակի պատկերը ձեւացնում է Աստուածածնին գահի վերայ աղաւնակերպ հոգին սուրբ իջած անմիջապէս գլխի վերայ Քրիստոս աւանակի վերայ հեծած զետեղուել է մօր ձախ ծնկան վերայ և փոքր ինչ ներքեւ գառը և աղաւնի Երկու ծերունի երկրպագում են երկու կողմից ևս Աստուածածնի աթոռի աջ կողմում գեղեցկառեսիլ ծաղկահիւս նկարի մեջ գրած է փակադիր Բանն Աստուած ։ Յիշեալ երկու արձանների գրութիւնը ճշտութեամբ տպագրուած է Զալակեանի դրբի մէջ ։

Ներսը պատկերի վերայ կան երկար արձանագրութիւններ թուով մինչեւ ասաներկաւ որոնց պատճէնը ինչ ինչ միամներով զետեղուած են Զալալեանի ճանապարհորդութեան մէջ ։ Ձեն արտագրուած միայն երկուսը որ լրութեան համար աւելորդ չէ յիշել այս տեղ ։ Ժամատան արևմտեան դռնից դէպի հիւսիս Եներըուստ Յանուն Աստուածոյ ես սարկաւագ երից որդի Սկ ։ չին եկի ի նորավանս ։ նշանէս առաջի իմ սրտի յոժարութեամբ զիմ գնած հայրենիքն ։ զնաչ ։ բդենց ի դին և զիմ հովանանս իւր ամենայն ։ և խնտափատուն ։ յեղնաձորի կմանակ գնած եկեղեցցոյ տվի որ ի տարին ե ժամ տան ։ յիմ հայրենեաց ։ թվ 21 (720—1271) ։

Երկրորդ արձանագրութիւնը ժամատան հարաւային և արևմտեան գօտու վերայ և թվի 28 (720—1261) այս գիր յիշատակի և արձան անջնելի իմ Սմբատայ իշխանաց իշխանի որդւոյ մէծին Լիպարիսի ։ շինեցի զեկեղեցիքն վերստին նորոգեցի ։ պահարանաւք և ետու իմ հայրենեացն Բ գիւղ ի սուրբ նախավկայս զնւէշ ու Անապատ և Անկոսի զնորատուն կ մեծ այգին իւր կիւրակրածրովն ։ Տէր Սարդիս և միաբանք հաստատեցին զաւագ խորանն որ հանապաղ պատարագ պարոնացն առնեն զշարաթն ու կիրակի Լիպարիտի հինգշարաթ Ասփային զերկու շարաթ ու զերեք շարաթն Ելիկումին չորեք շարաթն Իվանէին ուրբա-

թըն Փախրադուլային Արդ որ յետ մեր ժամանգեն ի տեղոյ յիմոց կամ յօտարաց և այս հաստատեալ պայմանիս հակադակել ջանայ և կամ ի ոտքը եկեղեցոյ հանել կամ զժամն խափանելոյ մեր մեղացն պարտական է և զանէծո ցաւագին զկայէնին և զԴալբզին առցէ ի բաժին զՅուղային և զԽաչաշանեալքո եթէ ոք ի տաճիկէ յաւագ փոխի ու հանել ջանայ ։ Ասուուեց ։ ։ ։ ։

Այս աղձանադրութեան բովանդակութիւնը մի քանի փոփոխութեամբ յիշատկւում է Օրբելեանի պատմութեան կե գլխում ։

Ժամանան յատակը ծածկուած է շարեշար տապանաքարերով մինչև քօննեօթը հատ ։ Այդ ոսուը գերեզմանները իւրեանց մէջ ամփոփում են շատ նշանաւոր անձանց նշխարները թէ Օրբելեան ցեղից և թէ հոգեորական դասից ։ Այժմեան ամբողջ մնացած միայն տապանաքարերի թիւն է 27 ։ իսկ հանգուցեալների թիւը առաւել է անշուշտ ըստորում շատ տապանաքարեր ոսոց ծնէելուց փշրուելնեն և դուրս նետուել որ պատահում է և այժմ ։

Որպէս զի իմօտց ծանօթանանք նշանաւոր մարդկանց հետ եռ շարեշար գերեզմանները կարգերի կրաքանեմ և ձեզ ներս հրաւիրելով կինդրեմ զնել նորանց հարաւից հիւսիս ակսած արեմտեան դրան մօտից ։

Առաջին կարգի առաջին տապանաքարի վերայ դրած է Այս է հանդիս Առաքել եպիսկոպոսին որ հանգեատ ՌԻ (1020—1571) ։ Աղ Է ի՞նչ պաշտօնի է եղել այս եպիսկոպոսը ես չդիմեմ միայն հպանական է որ նա լիներ նորավանքի միաբանութիւնից և մեղանից մօտ ժամանակ լինելով ազացցց է որ նորավանքը ժօ դարում շէն է եղել Երկորդ և երրորդ քարերը անարձանագիր են ։

ԶԵՐԵՐ գեղեցիկ մարմարին տապանաքարը որ դրած է ուղիղ դրան գէմ կրում է այս արձանադրութիւնը ։ Թիվին 2ԾԲ. (752—1303) Այս է շիրիմ հանգստեան մեծի Մերուպոլիտ Սիւնեաց Ստեփաննոսի ։ Տապանագիրը խիստ փափագիր լինելով չէ մտել Զալալեանի գըքի մէջ Ընթերցող գիւտէք սա ով է ։ Եթէ դուք սիրող էք հայոց քրիստոնէական հնութիւնների ։ Փոքը ինչ ուշադրութեամբ հետեւել էք իմ ։ Նկառողութեամաց չէք կարդացել նորանց որպէս զի անքուն ժամանակ քաղցր քուն բերեն աչքերիդ ։ այն ժամանակ ես կարծեմ ։ ըստէական սարսուռ կզգաք մարմնուտ մէջ և կցանկայիք ։ փոխանակ մօտ վեց հարիւր ամեայ ոսկերոտեաց պարթէ հասակով խրոխտ և պատկառելի դէմքով կանգուն աեսնէիք ձեր առաջ Սիսական աշխարհի պատմութեան հեղինակին ։ Հայաստանեայց եկեղեցւոյ քաջամարդիկ ախոյեաններից մինին ։ Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանին ։

Ահա այն մեծ մարդու շիրիմը որի տեղը շատ շատերը չգիտեն ։ որին

չեն ճանաշում՝ բազմաթիւ մարդիկ։ որի մարմարիոն տապանաքարը ան-
ըզգայաբար, անդիտութեամբ ոտաց տակ առնելով՝ վրայից անցնում են
ուխտաւորները և մանաւանդ՝ հետաքրքիր այցելուներ, որոգէս զի շա-
պեն ածուխով դրոշմելու իւրեանց ազգանունները ժամատան պատերի
վերայ։

Հինգեւրուր մարմարիոն տապանի վերայ կարդում եմ 229
(773—1324)։ Տուն իմաստից և հանձարց Արպել Յովհաննէս հոչակառոր
մետրոպոլիտ Սիւնեաց, Ի՞նչ պերճ և աղջու խօսքեր են։ Եթէ պատմու-
թիւնը լրէր անգամ տորա մասին այս խօսքերը բաւական էին փայլեցնելու
Յոհաննէս Կափիսկոպոսի մտաւոր և բարյական ոյժը։ Բայց պատմութիւնը
չէ զլացել աւանդել մեղ արժանիքը այդ պատմական անձաւորութեան,
որիւը ժամանակ մեծ հոչակէր վայելում արկելեան եղիսկոպոսների
շարքում։ Սա Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանի հօր եղբօր որդին է,
նորա ձեռնասունը և յաջորդը։ Այսքան ոչ սակաւ ուժեղ գրաւական է
Յոհաննէս մետրոպոլիտ Օրբելեանի արժանեաց։

Առաջին կարգը վերջանում է վեցերրորդ անգիր տապանաքարով։
Մի քայլ յառաջ գնալով աչքի եմ անցնում շիրիմների երւոր կար-
գը։ Առաջին գերեզմանաքարը արտայատում է «Զգեղեցկափթիթ ծա-
ղին» զքաջուղէշ մանուկն վաղաթառամ ի վանէ յիշեցէք։ թվ. 219։
(743—1294)։ Եւեւեալ տապանաքարերը կարգով պատկանում են պատա-
նի Ովուսին։ Մանկիկ Սամուելին Կայանէին, նաթել տիկինոջ և եօթն-
երրորդ արդէն ջարդուած քարը—պարոն նաթելին։

Աերջին երւոր կարգի առաջին գերեզմանաքարի վերայ գրած է «Այս
շիրիմ շնօրհալի Սարդոսի և Սիւնեաց եպիսկոպոսի և անյազմ հուետորի,
թվ. 219։ (747—1298)։ Եւեւոր վերայ «Տէր Գրիգոր Սիւնեաց եպիսկոպոս։
թվ. 239։ (754—1305)։ Եւեւոր վերայ «Տէր Ստեփաննոս Սիւնեաց
եպիսկոպոս թվ. 239 (709—1260)։ 2-րդորուած։ «Տէր Յոհաննէս Սիւնեաց եպիսկոպոս»։

Հինգեւրուր վերայ գրած է «Զքարեպաշտ մայր իշխանացս զԼսփան յի-
շեցէք»։ Սա Սմբատ և Տարսոյիկ իշխանների մայրն է։ Լիպարիտ ելլ-
կումեանի ամուսինը։ Օրբելեանը պատմում է թէ Զաքարէ Սպասալարի
եղբայր աթարէդ Խվանէ, շատ յարգելով երիտասարդ իշխան Լիպարիտ
Օրբելեանին։ կամենում էր փեսայացնել իւրեան, տալով նորան իւր
թամթի քոյրը։ Բայց մեծ դիգերուներից մինը Բուրպաք անուն, որ ա-
թարէդի իշխանութեան գործակալն էր, խորամանկութեմբ։ Աթարէդից
ծածուկ, փեսայացրեց Լիպարիտին՝ տալով ոորան իւր գեղեցիկ օրիորդ։ Աս-
փային, թէ և տապանագիրը չէ յիշում մահուան տարին, բայց պատմու-
թիւնը միշտ որոշում է 712—1263 թուականը։

Աւելիքորդ տապանագիրն է Քաջ սպառազէնն է Փախրադուլցյն ։ Սա Տարսայի մաս իշխանների եղբայրն է և Լիպարիտ իշխանի չորրորդ որդին Սուենիանոս Օրբելիանը սորա մասին միայն մի քանի խօսք է ասում անուաննելով Նորան տապանագրի ածականներով ։ Քաջ սպառազէնն է Ամսանուելու թուականը յայտնի չէ տապանագրից ։ Բայց ըստ Օրբելիանի՝ Փախրադուլան պէտք է մեռած լինի 1256—1260 թիւը ։
 Եթէ Հոգորդ գերեզմանը պատկանում է Խվանէին այս կարճ տապանագրով Գեղեցկածաղիկն է Խվանէ ։ Սա եւս նոյն Լիպարիտ իշխանի երրորդ որդին է որ ըստ Օրբելիանի վախճանուել է իւր եղբայր Փախրադուլայից առաջ Տապանագրի բառով պատմաբանը տալիս է նորան ։ Գեղեցկածաղիկն ածականը Խվանէ թողեց միայն մի ժամանք Լիպարիտ իշխանը պիհց ծնուեց վերցիշեալ Յովհաննէս եպիսկոպոս Օրբելիանը ։
 Մինչեւաց մետրապոլիտ Յանձնայի Օ արքանի առաջնորդութիւն ամ ։ Ա Ռինէրդի է Քարեւպաշտ իշխանաց իշխանին Այլիկումի է աստամիանս ։ Սա յիշեալ Լիպարիտի առաջին որդին է և նորա իշխանութեան ժառանգորդ Թաթարաց արշաւանքի փամանսակ այս Ելիկումը իշրայիններով պատսպարուեց Կրաչկացերդում և ապա անձնասուր լինելով առաջնորդ եղաւ Թաթարներին մինչև Անի քաղաք ։ Մի քանի տարից յետոյ նա մասնակցեց Թաթարաց արշաւանքին ։ Մարտիքոսաց կամ Նիկոկերտ կամ Մուֆարղին քաղաքի վերայ Աղմանաց գաւառում ։ ուր և հիւանդութիւնից մեռաւ ։ Են տեղից բերին նորա մարտինը և Թաղեցին նորավանքի սուրբ Նախալիպայի դռան մօտ ։
 Ելիկումի կամ Ելիկումի մահուան տարին յայտնի չէ ոչ տապանագրաց և ոչ պատմութիւնից ։ Բայց որովհետեւ նորա իշխանութիւնը ստունծնեց նորա երփորդ եղբայր Սաբաուլ որ տու տարի իշխելով մեռաւ 722—1273 թուին ուստի Ելիկումը վախճանուել է քամն տարի առաջ այն ։ 1253 թուականին ։
 Ելիկումը ունեցաւ մի որդի Բուրթել անուն ։ որ Հուղաւու խանի զորքի հետ գնաց կատերազմ Թաթարաց նշանաւոր ։ Թաթու իշխանի եղբայր Թելքայ կտոր Բելքէ զորալարի դէմ ոչ ժմայն Թերեք գեափ ափերում ։ ուր և սովոնեցաւ 710—1261 թուին Սմբատ իշխանը կազմել է նորավանքում Երկու արձանագրութիւն 710 Թուականից որոյ յիշում է այս Թուրթել անունը ։ Ապան հոգայ Եղբայր որդուցն իմոյ Բուրթէին որ տղայ հանակաւ սպանակի պատերազմի յաշխարհն Խալանդրաց Եղաշակն Խալդրաց զոր այժմ Խփախէք կոչեն։ Միւր արձանագրութեան մէջ վլսն փրկութեան հոգւոյ Եղբայրութեայ իմոյ Բուրթէին որ գեռարյու նորակիթիթ հասակաւ փոխեցաւ առ Քիհստոս մատերազմաւ ի գաշտին Սկիւթացւոց խաւար էած ակնողաց ։ 8021—917 ։ Խաղող բազ յայտն

Սմբատ իշխանի տողերից երևում է որ Եփոքթել իշխանը սպանուել է երիտասարդ հասակում՝ ըստորում երկու արձանագրութեանց մէջն ևս անուանում է նորան ողայ նորանի, ուեւոչոյ, նորանինի հաստի ։

Իներրորդ քարը Աւրեորդ Թամթիկինն է ատաներրօրդ Պարոն Թաղնցինը՝ իսկ վերջին տասնմէկ և տասներկու երրորդը և անգիր են և ջարգուած ։ Սոցա վերայ կարելի է աւելցնել և երկու փոքրիկ տապանաքարեր եկեղեցու դռան քարէ աստիճանների հարաւային կողմում ։ Մինը մանուկ Օլիկինն է իսկ միւսի խիստ փակագիր գրումիւնն է յիւսաւ, այբարձիմ և Այս հանդոցեալ այս տապանիք այս և Աւանձաւ անք նժրաւանմանցը Զքնաղ մանուկ զարմանալի դիպայ խամաճառու սոյ առանց մամելուցը Որ Խվանէ անդւն կոչչաւան սժրադրասոն դա ովաս ազգու մը յու մն եղջիւր ծագել Աւրելեցի սկզան պարմ բայ և մամելուցը մն Որդի Զեսար մեծ իշխանի նպատակցում Ձաւած ։

Ինչպէս ԻՇ գլխում եւ յիշել եմ այս մանուկը պէտք է լինի Սէլիմ Հռչակաւոր քարուանսարայ կառուցանողի որդին ։ Զէսար իշխանի անունը Վայոց ձորի բաղմաթիւ արձանագրութեանց մէջ յիշնում է միայն Սէլիմ քարուանսարի արձանագրութեան և այս մանկան տապանաքարի գրութեան մէջ ։

Ժամանան քսան և եօթ տապանաքարերից մարմարին են առաջին կարգում Ստեփաննոս և Յոհաննէս մետրոպօլիտներինը և վերջին երկու կարգումը բալորը ։ Ամաղուի նորավանքը ինցակս տապանաքարերից և պատմութիւնից տեսնում ենք եղել և Վայոց ձորի Օրբելեան տոհմի դամբարանը ։ Տապանաքարերը ցոյց առին որ Օրբելեան ցեղից թողուած են Արքարիս իշխանի ամուսին Ասփան սոցա որդիք Ելիկում ։ Սմբատ Խվանէ Փախրագուայ և Տարսային վերջինիս կողակից Մինս Խաթունը և սոցա որդիք Ելիկում ։ Ստեփաննոս մետրոպօլիտ և Փախրագուայ ։ Ելիկումի ամուսին Թամբա Խաթունը սոցա որդին Բուղդան և թոռն Սմբատ մանուկը և վերջապէս Լիպարիտի որդի Յոհաննէս Մետրոպօլիտ Ամիայն պատմութիւնից յայանի է որ այստեղ թաղուած են նոյն տոհմի և այլ անդամները որոց տապանաքարերը չեն երևում ։ Երկի նոքա կամ ջարդուել են կամ ծածկուել են հողի տակ ։ Վերջիններին պատկանում են Լիպարիտի իշխանը Վայոց ձորի Օրբելեանց նախահայրը և Սուրբ Կարապետի եկեղեցին կառուցանողը ։ Նորա մայր Խաթունը որ երկուսն էլ թաղուել են այդ եկեղեցու դռան առաջ ։ Հետեւ նոյնպէս Յոհաննէս մետրոպօլիտի հօր Լիպարիտի գերեզմանը ։ Նորա որդւոց Սմբատի և միւս երեքի, Տարսայինի որդի Զալալի և թոռ Բուղդելի գերեզմանները եայլն ։

Սմբատի ժամանան մէջ այլոց կարգում կան ինչպէս տեսանք և

Հինգ Եպկողոսների տապանաքարեր, որոնք ծառայել են նյուն նորավանքում:

Վերջացնելով ասելիքս այս ժամատն մասին, աւելացնեմ որ նորան կառուցել է Սմբատ իշխանը իւրայինների գերեզմանների վերայ. «Սա շինեաց դիրաչակերն ժամատունն ի նորավանս ի վերայ գերեզմանաց իւրոց և արար բազում արդիւնս և փարթամացոյց զնաւ անում է Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանը*),

Այժմ մանենք Սուրբ Կարապետի եկեղեցին. չորս քարե աստիճան տանում է նորա մրտակ արեւմտեան գուռը Ուրեմն եկեղեցու յատակը չորս աստիճանով բարձր է ժամատան յատակից կամ ընդհանրապէս գետնից, որ մօտաւորապէս հաւասար է երեք արշին բարձրութեան. Յատակի այդ դիրքը տալիս է առիթ կասկածելու թէ մի գուցէ նորա տակը կայ ծածուկ ներքնայարկ իրեւ պահարան եկեղեցական իրեղէնների, թէև ոչ ներթից և ոչ գրնից չէ երևում մուտքի ոչ մի նշան.

Կամարական եկեղեցին ամբող ջապես շինած է կարմրաշէկ սրբատաշ քարից՝ չորս որմնակից սիւների վերայ և չորս լուսամուտով. Վայելչազարդ կաթողիկէն արդէն խոնարհուած է 1840 թուականի շարժի ուժից. Այժմ բարեպաշտ ուխտաւորների աշխատութեամբ բաց առասադր ծածկուած է փայտովլէ հողով. Սրբազնն պատրագը մատուցանելու օԵղանները ինն են, մեծ աւագ քեմը և ութն ութ խորանների մէջ. Ութ խորանից չորսը առաջին դասումն են և չորսը վերջին. Խորանների չորսը միւս խորանների վերայ կազմում են երկրորդ յարկ, ուր ատանում են քարե նեղաստիճաններ, մի ծայրերով պատի մէջ ամբացած. Եւ աւարտեն զնամն եօթն ութն խորանօք, ատում է Օրբելեանը այս եկեղեցու մասին**).

Եկեղեցու պատերի վերայ կան չորս երկար արձանագրութիւն զանազան նույիրաւութեանց համար, որոց պատճէնը մի քանի վրիպակներով տպագրուած է Զալալեանի գոքի մէջ. Առաջինը հիւսիսային պատի վերայ 670 հայկական թուականից պատկանում է եկեղեցին կառուցանող Լիպարիտ Օրբելեանին. Միւսը՝ 747 ից Ստեփաննոս եպիսկոպոս Օրբելեանինն է. Հարաւային պատի վերայ արտաքուստ կայ արեւի ժամացոյց.

Երբեմն հոչակաւոր սուրբ Կարապետի եկեղեցին կամ ընդհանրապէս Ամաղուի նորավանքը չունի այժմ այնքան մեծ հոչակ. Խրաբանչիւր տարի վարդապահն՝ մի քանի ուխտաւորներ, մեծ մասը կանայք Դարալագիազի Արփայ, Կիշիկ և Խաչիկ գիւղերից, բայց առաւել Շարուրի

(*) Օրբել. Պատմ. գլ. ԿԶ.

(**) Օրբ. Պատմ. գլ. ԿԵ.

Ալիս նորաշէն գիւղից հաւաքւում են վանքի շուրջը աղօթում են, զբօսնում են, ուտումեն իւրեանց բերած մատաղացու ոչխարների և աքաղաղների միսը և ցրում։ Դալն ու գնալը կատարում է միայն մի օր։ Գնանք պյժմ բուրթել իշխանի չքնաղ տաճարը սցն վանքի պարսպի մէջ, քսան կամ քսանհինդ քայլ գեպի հարաւ։ Այդ կարծ ձանապարհի վերայ, քարակյուտների մէջ տեսնեաք ի՞նչ խաչքարեր և տապանաքարեր կան փոքր ի շատէ նշանաւոր։

Ժամատան հարաւային պատից ութ քայլ հեռու տապանաքարերի շարքում մինի վերայ գրած է «Պարոն Մահէւանայ է», Օրբեկեանը յիշում է, որ Մահէւանը Բաղաց իշխաններից էր, Զուրջեանց թոռն, Բաղաց երկիրը աւերռելուց յետոյ Մահէւանի նախնիքը, Աթարէդ նվանէի օրով և հրամանով եկել բնակուել էին Վայոց ձորում։ ուր տուած էր նորանց իրքեւ սեփականութիւն նրբոյն բէրդը այն է այժմեան Ելփինը և Ծրէշ բլուրը (գլ. իդ). Մահէւանը ժառանգում է այդ կալուածքը և անզաւակ գոյացի կէս մասը նուրիում է նորավանքին և խնդրում է որ գորա փոխարէն իւրաքանչիւր տարի քսան օր պատարագ մատուցանեն նորա համար։ Այս առթիւ նորա կալմած արձանագրութեան մէջ նշանաւոր են հետեւեալ տողերը և եւ կամ յառաջնորդաց տեղւզն և ի ժառանգաւորաց զգատարագն ծուլանան կատարել և անհոգ առնել այնպիսին ջնջեալ եղիցին ի գոյրութենէ կենաց***)։

Երկու խաչքարերի վերայ գրած են, ա. «Կամաւն Աստուծոյ ես Կուգորի որդի Ախթամարին կանգնեցի զխաչս յաղակս մաւր իմոյ Ասփային (թերևս Ասփային) որ երկրպագէք՝ յիշեցէք ի Քրիստոս ի թվիս 21.9 (734—1285). բ. «Կամաւն ես կուկոր որդի մեծ Ախթամարին կանգնեցի զխաչս եղբաւր իմոյ Փալկայ որ կիսաւրեայ փոխեցաւ ի Քրիստոս թվիս 21.9. (734). Այստեղ յիշած Ախթամարը Արփայ գիւղում բնակուող հին յայտնի Ախթամարեանց տոհմիցն է և Աթարէդ նվանէի օրով և ուժով առաւ Հրշկարերդը պարսիկների ձեռքից։

Այժմ քայլ առ քայլ մօտենանք Բուրթել իշխանի տաճարին, ի՞նչ տարձար, մի չքնաղ գեղեցկատեսիլ նրբաշէն հյակապ երկյարկանի եկեղեցի։ Այս ի՞նչ բաղմաթիւ սրբատաշ քարերիկյուտեր են ցան ու ցիր թափուած եկեղեցու շուրջը։ Դոքա աւերակ եկեղեցու գմբեթից ու պատերից թափուած քարերն են, և այդ յառաջացելէ քառասուն թուականի անողորմ շարժից։ Այսող շինութիւնը կառուցած է միայն մի տեսակ՝ բաց գեղին քարից, հիանալի սրբատաշ և միմեանց նրբութեամբ յարմարեցրած, ներ-

(**) Օրբ. Պատմ. գլ. ԿԴ.

քին և վերին շարկը ունին մի դուռն արեմուեան պատի մէջ գեղեցկաբանդակ նուրբ շրջանակներով:

Ներքնայարկի դռան վերը կիսարոլոր կարմրագոյն քարի ճակատին աթոռի վերայ բազմած Մարիամ Աստուածածինը, իւր աակն ունենալով զօլում շից մութաքայ, զետեղել է իւր գօրում մանուկ Քրիստոսին: Աստուածածնի գլխավերը գեղեցիկ ուռուցիկ (ռելիեֆ) տառերով գրած է «Մայր Աստուծոյ», նորա աջ կողմում Գարբիէլ և ձախում Միքայէլ Հրեշտակապեանները ամբողջ հասակով կանգնած, տարածել են ձեռքերը նորա մերայ, Խրաբանչիւրի տակ գրած է նորանց անունները: Այդ տեսարանից վեր՝ նոյնպէս ուռուցիկ հրաշալի տառերով գրած է 22Ը (788—1339) որ ցոյց է աալի սպանչելի եկեղեցու շինութեան տարին:

Ծաղկանման նկար մեծ ճարտարութրամբ իրար հետ հիւսած, իրեւ ժապաւէն շրջապատում է դռան բոլորը: Երկու քերովիկ մարդապատկեր թագաղարդ գլուխներով և թեւերով կանգնած են թուչունի ոտերի վերա: Սորանց իւրաքանչիւրի տակ մի մի աղաւնի հիւսուածքի ծաղկինները կառոցներում:

Ներքնայարկի դռան աջ և ձախ կողմից բարձրանում են քարէ աստիշաններ, թուուկ տամաններէք որոնք մի ծայրով միայն ամրացած են պատի մէջ: Սորա մրանում են երկրորդ յարկի դռան առաջ և կաղմում են նորա մուտքն և ելքը: Աստիճանները բաւականին նեղեն և մարդ չէ կարող ազատ բարձրանալ կամ իշխել:

Աերքնայարկի դռան շրջանակը ևս առաւել գեղեցկանկար է: Դորա վերը Յիսուս Քրիստոս ճամ ճեռքիւմ աւետարանը, աջ Ճեռքով աեառնագրում է: Տակը գրած է Յիսուս Քրիստոս: Ապա ծալեծալ քղանցներով կանգնած են աջ կողմում Պետրոս և ձախ կողմում Պողոս առաքեալները իւրաքանչիւրի տակը գրած իւր անունը: Դռան շրջանակը բոլորով ծաղկանակար ժապաւէնը ևս առաւել մեծ ճարտարութեամբ էկաղմած: Աջ և ձախ կողմում մի մի սրաթռուչ բազէ: Իրար վերայ նայում են, Երկու դռան շրջանակի հիւսուած ժապաւէնը տեղ առ աեղմու դռնով ներկած է: ապացոյց որ հետախոյզ մարդիկ կամեցել են, վերցնել իսկականի պատճէնը:

Ցերունական արձանից վեր ուռուցիկ տառերով գրուած է հետեւալ արձանագրութիւնը: «Կամաւն Աստուծոյ ես պարսն Քուրթել իշխանաց իշխան և ամուսինն իմ Ամիսաթ և որդիք իմ Բէշկէն և Կվանէ կանգնեցաք զեկեղեցին ի մեր հալալ արդեանց»: Արձանագրութիւնը զետեղուած է երեք միմեանց կից սրբատաշ քարի վերայ բայց ափոս որ միջին քարն ընկած է գետին:

Ծալեծալ ծաղկանկարը զարդարում է հիւսիսային լուսամտի շուրջը:

և նորա վերայ նկարած է Քրիստոս (Քաղաքանի գլուխ մէջ Տիրմայր) աջ ձեռքով խաչակըռում է: Խսկ ձախով ըռնել է աւետարանը: Կողքերում կանգնած են երկու քերովիք: Սորա վերի լուսամտի շրջապատ խաչի կարմիր ներկը մնում է գեռ ևս: Ներքնայարկի արևելեան լուսամտի տակ արտաքուստ ծաղիազարդ հիւսուածների մէջ մեծ ճարտարութեամբ դրած է «Բիւրթել իշխանաց իշխան»:

Այժմ յանենք ներս: Երեք չորս աստիճան ցածանալով իջնում ենք ներքնայարկի մէջ: Առաստաղը կամարակապ կանգնած է չորս որմնափակ ովեների վերայ: Երեք կենդանակերպներ՝ ցուլ՝ առիւծ և արծիւ քանդակած են առաստաղի երեք կողմում: Խսկ չորորդ կողմում—Յիսուսի կիսարձանը: Յատակում դրած են երկու երեք տապանաբարեր առանց արձանագրութեան և թուականի: Ներքնայարկը չունի բեմ: Ուրեմն իւր ժամանակին գուցէ սա լիներ պահարան կամ դամբարան:

Վերնայարկը նոյնպէս կամարակապ է և աւագ սեղանի երկու կողմում ունի երկու խորան փոքրիկ բեմով: Աչ խորանի առաստաղի վերայ կայ մի պահազարդ գլուխ: Խսկ աւագ սեղանի կամարի վերայ շատ կենդանի նկարած է Քրիստոս չորեք կերպեանների վերայ նստած, ունենալով երկու կողմից մի մի հրեշտակ: Սորանից փոքր ցած, լուսամտի վերը՝ աղաւնակերպ սուրբ հոգու երկու կողմից գեղեցիկ ծաղկահիւս տառերով դրած է «Հոգին Սուրբ»: Վերնայարկի եկեղեցին սարսափելի ձեղձղքուած է: Կամարները խորտակուած: Մասամբ ամբողջ են մնացել սեղանի և հարաւային կամարները:

Վերնայարկի յատակում կուտակուած քարերի մէջ կան գմբեթի մասեր և սիւները: Երկու ամրողջութեամբ մնացած սիւներից մինի վերայ քանդակած է մօրուսաւոր մի մարդ, մինչև կրունգները երկայն հանդերձով: Կոճակներով գոտին կապած մէջքին, եղրները յետ ծալած սրածայր գլխարկով՝ ոտերը անկրունգ կօշիկներում: Աջ ձեռքը ձախից աւելի է պարզած գեպի վեր: Միւս սիւնի վերայ նոյն պատկերով և հանդերձով մի մարդ ձեռքում բռնել է եկեղեցս փոքրիկ կաղապարը: Հաւանական է որ երկու քանդակները ևս ներկայացնում են Բուրթել իշխանին:

Սոյնպիս սիւներից մի քանիսը ընկած են գուրս: Նոցանից մինի վերայ ևս տառածածինը բազմած է բազկաթոռի մէջ, Քրիստոսը ծնկան վերայ և սորա տակը գառը: Մի սիւն որ ընկած է ներքնայարկի մէջ, կրում է իւր վերայ մի նստած մարդու պատկեր վերոյիշեալ հագուստով և գոտիով բազէն աջ ձեռքի վերայ: Սոյն մարդու գլուխը չկայ, քարը կոտրվել է: Այս բալորից երեսում է որ գմբեթի բոլոր սիւները իւրեանց վերայ կրում էին այս և այն կերպարանք:

Ներքնայարկի դռան հիւսիսային կողմը, գետնի վերայ ընկած նրբագանդակ

